



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 447 - Ա

31 օգոստոսի 2021 թ.

**«ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԳԱՐԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ
ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԳԱՅԱՆԵ ՂՈՒԼՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Գարիկ Սողոմոնյանի 2021 թվականի օգոստոսի 30-ի գրությունը որոշում եմ՝

1. «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գարիկ Սողոմոնյանի ժամանակավոր անաշխատունակության պատճառով, 2021 թվականի օգոստոսի 30-ից 2021 թվականի սեպտեմբերի 3-ը ներառյալ «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը, ժամանակավորապես վերապահել «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Գայանե Ղուլոյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

31.08.2021



(Handwritten signature)

ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Подписано: MANUKYAN NAREK 2203890517

**Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ք. Գավառ**